

ԿՈՒՆՈՉԻԿԻ
ՎՐԱՅԱՐԱՆ



Ս.Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԵՎԱԾԱՂԿԻ ՄՃԱԿՄԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՈՒՄՆԵՐ



ՀԱՅՊԵՏԱՐԱՏ

633.85

25972

Ա-86 Արքային, Ա.Ա.

Վրժմանի Տղական
տպագույն հատ:

504.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՅՈՒՂԱՏԵՏԵՄՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

(Գյուղատնտ. գիտութ. քեկմածու)

633.854.78

ԱՏՈՒԳՎԱՆ է 1961 թ.

Ա-26

ԱՐԵՎԱՇԱՂԿԻ ՄՇԱԿՄԱՆ
ԱԳՐՈՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՅՈՒՂԱՏԵՏԵՄՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

A 18579



ՀԱՅՊԵՏՏԱՏ

ԱՐԵՎԱՆ

1948

С. С. САРКИСЯН
АГРОУКАЗАНИЯ ПО ОБРАБОТКЕ
ПОДСОЛНЕЧНИКА

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1948

ԱՐԵՎԱԹՍՂԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արելածաղիկը մշակվում է հիմնականում ռերմ ստանալու համար:

Վերջին տարիները Միության հյուսիսային և ոչ ուսահղացին գոտիներում, ինչպես նաև Հայկական ՍՍՌ մի շարք շրջաններում, արևածաղիկը մշակվում է նաև որպես սիլոսային կուլտուրա:

Արևածաղիկի սերմերն իրենց մեջ պարունակում են 28—30 տոկոս բռնական յուղ, որը ստացվում է ձիթագործարաններում վերամշակելու միջոցով և հանդիսանում է լավորակ բռնական սննդայուղ, որը ազգարնակչության կողմից անմիջականորեն օգտագործելուց բացի, լայն կիրառվում է մարդկարինի, կոնսերվի, ճրոշակեղենի և սննդի արդյունաբերության այլ ճյուղերում:

Արևածաղիկի ձերն օգտագործվում է օճառագործական, ներկերի և արդյունաբերության տարրեր ճյուղերում:

Զիթագործարաններում արևածաղիկի սերմի վերամշակումից ստացված կուպանը (քուսալը) արժեքավոր և սննդարար կեր է մթերատու և բավող կաթնատու անասունների համար:

Արևածաղիկի ցողունները օգտագործվում են որպես վառելանյութ:

Արևածաղիկն առանձնահատուկ արժեք է ներկայացնում նաև մեղվարության համար:

Արևածաղիկից վերցրած մեղրը համի տեսակետից, մեծ արժանիքներ ունի:

ԱՐԵՎԱԹՍՂԿԻ ԲՈԽՍԱԲԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՒՏ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևածաղիկը դորեկ արմատային սիստեմով և բարձրաբուժ ցողունով միաժյա բույս է, որը պատկանում է բարդածաղկավորների ընտանիքին:

Նրա սորտերը բաժանվում են՝ երկու հիմնական խմբի՝ յուղատու և շրթելու թացի դրանից, գոյություն ունի նաև մեկից մյուսին փոխանցվող տեսակը (մեժեռամոկ):

Յուղատու արեածաղիկը, արժանի է առանձնակի ուղագրության և լայն արտադրական նշանակություն ունի:

Չրթելու և մեժեռամոկ խմբի սորտերը արտադրական տեսակետից առանձին նշանակություն չունեն:

Ունենալով հողի մեջ խորը թափանցող արմատային զորեղ սիստեմ, արեածաղիկը, մանավանդ նրա յուղատու տեսակները, շարքահերկ մի խոսքը կուլտուրաների հետ համեմատած լավ է պիմանում երաշտին:

Թացի այդ, արեածաղիկը պատկանում է այն բույսերի շարքին, որոնք դիմանում են գարնանային կարճատև ցածր ջերմաստիճանին: Արեածաղիկը կարճ օրվա բույս է, և օրվա լուսավորման ժամանակաշրջանը այսինքն ցերեկը կարճանալու դեպքում կարձանում է նրա բունաճման (վեգետացիոն) ժամանակաշրջանը:

Կլիմայի նկատմամբ ունեցած իր պահանջով արեածաղիկը հանդիսանում է տափաստանային և անտառափափաստանային գոտու տիպիկ բույս:

Սերմ ստանալու նպատակով արեածաղիկ աճեցնելու հիմնական նախապայմաններից մեկը, բուսաճման ժամանակամիջոցի համար պահանջվող ջերմաստիճանի ընդհանուր քանակի առկայությունն է, որը հավասար է 2000—ից մինչև 2600 աստիճանի (ըստ Ցելսիոնի):

Արեածաղիկը, առանձնապես նրա յուղատու տեսակը, լավ աճում է հարուստ սևահողերում, ինչպես նաև շագանակագույն և գորշ հողերում, ըստ որում, տեղական և հանքային պարարտանյութերուի պարարտացնելուց զգալի շափով բարձրանում է բերքատվությունը:

Արեածաղիկը զգայում է դեպի խոնավությունը, սակայն առաջ խոնավության չի դիմանում: Նրա յուղատու սորտերն առավել չորադիմացկուն են, քան շրթելու սորտերը:

ԱՐԵՎԱԾԱՂԻ ՏԵՂԸ ՅԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բարձր և կայուն բերք ստանալու տեսակետից, ինչպես մյուս բոլոր կուլտուրական բույսերի, այնպես էլ արեածաղիկի համար,

յանքաշրջանառության մեջ՝ տեղի ճիշտ ընտրությունը վճռական նշանակություն ունի: Ամենից լավ է արևածաղկի ցանքերը կատարել աշնանացան հացահատիկներին հաջորդող շարքահերկի դաշտում:

Եթե արևածաղկիը մշակվում է ցանքաշրջանառությունից դուրս, ապա այն պետք է ցանել աշնանացան հացահատիկային կուլտուրաներից, ինչպես նաև ընդեղեններից հետո: Բացի այդ, արևածաղկիը Ստեփանավանի, Կալինինյի, Կիրովականի, Ալավերդու և մի շարք այլ շրջաններում կարող է նախորդել աշնանացանին:

Արևածաղկի ցանքը սորտային սերմերով կատարելու դեպքում, անհրաժեշտ է այն մեկուսացնել այլ սորտերի ցանքերից, ոչ ուղարկաս, քան 1,5 կիլոմետր հետավորության վրա:

ՀՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողի հիմնական մշակությունը, ինչպես մյուս բոլոր կուլտուրաների, այնպես էլ արևածաղկի համար, բարձր բերքի երաշխիքն է:

Արևածաղկի ցանքի համար նախատեսված հողամասերի վրա, հասկալուր կուլտուրաների բերքահավաքից անմիջապես հետո, անհրաժեշտ է կատարել երեսվար (լուշիլնիկով) 5—7 սմ խորությամբ, իսկ 15—20 օր հետո, եթե մոլախոտերի սերմերը մասսայաբար ծլում են, պետք է կատարել խորը ցրտավար՝ նախախոփիի կավոր գութաններով: Ցրտավարի խորությունը պետք է լինի 22—24 սմ-ից ոչ պակաս:

ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

Բարձր բերքի վարպետների փորձով, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկների տվյալներով ապացուցված է, որ արևածաղկի հողամասի պարարտացնելը՝ բարձր բերքի վճռական պայմաններից մեկն է:

Արևածաղկիը բավականին դգայում է դեպի հանքային և տեղական պարարտանյութերը: Պարարտանյութերը, մանավանդ օրդանական—տեղական պարարտանյութերը, պետք է հողի մեջ մտցնել աշնանը՝ ցրտահերկից առաջ, յուրաքանչյուր հեկտարին

տալով 20—25 տոննա գոմազք և 300—ից 350 կիլոգրամ սու-
պերֆուֆատ:

Բացի այդ, գարնանը, նախացանքային մշակությունից առաջ,
յուրաքանչյուր հեկտարին պետք է տալ 200—220 կիլոգրամ սուլ-
ֆատ-ամոնիում, կամ դրա կեսի շափով ամոնիումի սելիտրա:
Արևածաղկի պարարտացումը անհրաժեշտ է գառնում այն տե-
սակետից, որ այդ կուտուրան հողից մեծ քանակությամբ սննդա-
նյութեր է վերցնում:

Պարարտացման էֆեկտիվությունը որոշվում է ոչ միայն պա-
րարտանյութերը ձիշտ ընտրելով, նրանց հարաբերությամբ ոպ-
տիմալ դոզա վերցնելով, այլև պարարտանյութերը հողը մտցնելու
եղանակով: Պարարտացման անբավարար էֆեկտը շատ դեպքե-
րում բացարձում է նղանով, որ այն խորը չի մտցվում հողի մեջ:
Հանրահայտնի է, որ կուլտուրական բույսերի կողմից պարարտա-
նյութի լավագույն օգտագործումը ապահովվում է միայն այն
դեպքում, եթե այն հողի մեջ մեց մեց պարարտացմանը,
որտեղ ամենից շատ է զարգանում արմատային սիստեմի հիմնա-
կան մասսան: Արևածաղկի գործարար արմատային սիստեմն
սկսում է հողի մակերեսությունը 7—10 սմ խորությունում, ուստի
անհրաժեշտ է պարարտանյութն ավելի խորը մտցնել հողի մեջ,
որը իր նպատակին ծառայել կարող է աշնանը՝ ցրտահերկի պա-
րարտացման ժամանակ:

ՀՈՂԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վաղ գարնանը, հենց որ հողի վերին շերտը որոշ շափով ցա-
մաքում է (քեզի է գալիս), հարկավոր է ցրտահերկը հնարավորին
շափ կարճ ժամկետում՝ 3—4 օրում, փոցիսել 1—2 երես: Ցըր-
տահերկի փոցիսումն ուշացնելը՝ անխուսափելի մեծ շափով խոնա-
գություն է կորուստի մատնում:

Հետազոտող էղերի տվյալներով, պարզվել է, որ եթե հողը
նախացանքային փխրեցում չի ստանում, 10 օրվա ընթացքում նրա
յուրաքանչյուր քառակուսի մետր տարածությունից գոլորշիանում է
5243 գր. չորս: Այդ նույն հողի վրա 8,5 սմ նախացանքային
փխրեցում կատարելուց հետո, նույն ժամկետում յուրաքանչյուր
քառակուսի մետր տարածության մակերեսից գոլորշիացնում է 633

գր չուր, այսինքն 8-ից ավելի անգամ պակաս, քան առաջին դեպքում (Վ. Ռ. Վիլյամս, Հոլաֆիտություն, 1937թ.):

Ցանքսից առաջ պնդրաժեշտ է կատարել նախացանքային կուլտիվացիս՝ թաթավոր կուլտիվատորներով, կամ բազմասուփառ նի անթե՛ գութաններով ու անթե՛ այլ գործիքներով, և միաժամանակ փողիսել:

Հովի մակերեսը հարթելու, սերմերը լավ ծածկելու և հետագա միջարքային մշակությունը հեշտացնելու նպատակով, նախացանքային մշակությունը պետք է կատարել ցրտավարի ուղղությանը հակառակ, այսինքն՝ ցրտավարի լայնությամբ (խոտորնակի), կամ անկյունագծով եթե հողամասի լայնությունը հնարավորություն չի տալիս արտադրողաբար օգտագործել ագրեգատը:

Նախացանքային մշակությունը պետք է կատարել այն հաշվով, որպեսզի նրանից հետո հողն անմիջապես ցանվի:

ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՑԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Սերմացուն պետք է խնամքով մաքրվի, տեսակավորվի, նրանից հեռացնելով նաև թեթե, վտիտ և կիսատլած սերմերը:

Սերմի որակը շատ բանով կախված է նրա բացարձակ կշռոց, այսինքն՝ 1000 հատիկի կշռոց: Բարձր բացարձակ կշռությունը սերմեր միշտ էլ բարձր բերք են տալիս: Խոշոր, լիակշիռ սերմերը ունենում են և ծլման բարձր էներգիա և միշտ էլ տալիս են հավասարաշափ առողջ ու լրիվ ծիլեր: Մանր սերմերը, առավել ևս վտիտ, ոչ լրիվ լցված սերմեր՝ ծլման թույլ էներգիա են ունենում, ծլում են անհավասարաշափ, որպես կանոն տալիս են նոսր ծիլեր և թույլ ու թերզարգացած բույսեր: Այդպիսի սերմերի բույսերը թույլ են դիմադրում հիվանդություններին և վնասատուներին: Արևածաղկի սերմերի յուղատու սորտերի բացարձակ կշռութանվում է մեկ զլիիկի սահմաններում 30-ից մինչև 100 գրամ: Սերմի միջին բացարձակ կշռութ տատանվում է՝ նայած տարվա պայմաններին, սննման տարածությանը, բերքի տեսակավորման որակին և հենց իրեն սորտին, 50-ից մինչև 90 գրամի միջև:

Ցանքի համար անհրաժեշտ է սերմը հասցնել բարձր բացարձակ կշռութ՝ 70—75 գրամի, որին կարելի է հասնել սերմը 2—3 ան-

գամ քամհարով անցկացնելու միջոցով։ Այդ գեղքում անշատվում են՝ ոչ միայն թուզը, փշված և մանր սերմերը, այլ և ճրագախոտի սերմերը և ժանդի սպորները։

Արևածաղկի ցանքը պետք է կատարել մաքրությամբ և ծլունակությամբ բացառապես կոնդիցիոն սերմերով։

Արևածաղկի պետք է ցանել սեղմ ժամկետում, 3—4 օրում, վաղ գարնանցանի հետ միասին։

Վաղ ժամկետներում կատարված ցանքերում միշտ էլ ալտՀովում է սերմերի լրիվ ծլումը։

Ցանքն ուշացնելու դեպքում ծիլերը նոսր են ստացվում։

Հատկապես այդ տեղի է ունենում այնպիսի վայրերում, որի գարնանը ուժեղ և տևական չոր քամիներ են լինում, որի հետևանքով հողի վերին շերաբ շորանում է։

Ցանքերի նոսրություն նկատվում է և այն շրջաններում, որտեղ չնայած բավականաշատի խոնավություն կա, սակայն երբ ցանքը ուշացնում է։

Կարճ վեգետացիայի ժամանակաշրջան ունեցող շրջաններում ցանքը վաղ կատարելը բացարիկ նշանակություն ունի։ Ավելի ուշ ժամկետներում կատարած ցանքերը ուշ են հասունանում, դրանով իսկ ձգձգում են բերքահավաքը՝ մինչև ուշ աշուն։ Այդ գեղքում ինքը բերքահավաքը կատարվում է բնակլիմայական անբարենպաստ պայմաններում և մեծ կորուսաներով։ Այդ պայմաններում հավաքված սերմերը բարձր խոնավություն են ունենում, վատ են չորացվում, որպիսի հանգամանքը շատ դեպքերում սերմերը պահելու ժամանակաշրջանում մեծ ազդեցություն է թողնում նրանց ծլունակության վրա։

Բերքատվությունը իշնելուց և բերքահավաքի ժամկետները ձգձգելուց բացի, ցանքի ուշ ժամկետները խիստ իշեցնում են սերմի որակը։

•Բերքի որակի հիմնական ցուցանիշը հանդիսանում է սերմերի յուղայնությունը։ Վերջինս ուղղակի կախում ունի սերմի կորիգի մեջ եղած յուղի տոկոսից և հակառակ կախում ունի կճեպի տոկոսից։

Հաստատված է, որ սերմերի կճեպի տոկոսն աճում է ցանքը ուշացնելու դեպքում, իսկ կճեպի տոկոսի բարձրացումը՝ իշեցնում է յուղի տոկոսը սերմի մեջ։

Վերը շարադրածները լուզլ են տալիս եղբակացնել, որ վաղ ժամկետում՝ վաղ հասկավոր ցանքերի հետ կատարված յուլատու արևածաղկի ցանքն ապահովում է սերմերի լավագույն բերքը, յուզի բարձր պարունակությունը:

Պոչուկով ուժեղ վարակված հողամասերում ցանքը պետք է կատարել միայն աճած մոլախոտերը կուլտիվատորով ոչնչացնելոց և միաժամանակ փոցինելուց հետո:

Արևածաղկի տեղը ցանքաշրջանառության մեջ» հատվածում մենք խորհուրդ տվինք արևածաղկիլ տեղավորել աշնանացան ցորենին նախորդող հողամասում: Քանի որ արևածաղկիլ հանդիսանում է այնպիսի կուլտուրա, որի երիտասարդ բույսերը իրենց բիոլոգիական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունների շնորհիվ երկշուր չեն կրում վաղ գարնանային սառնամանիքներից և հաշվի առնելով նույն զաշտում արևածաղկին հաջորդող կուլտուրայի՝ աշնանացան ցորենի համար դաշտի ավելի վաղ ազատվելու ազրոտեխնիկական պահանջը, ուստի խորհուրդ է տրվում արևածաղկի ցանքը կատարել ուշ աշնանը՝ «դոնդուրմաց» կարգով, որը փորձարկել է ՍՍԸՄ-ի մի շարք երկրամասերում և շրջաններում ու դրական էֆեկտ է տվել:

Արևածաղկի «դոնդուրմա» ցանքի ազրոտեխնիկական և տընտեսական առավելությունը գարնան ցանքի համեմատությամբ կայանում է հետեւյալում, ամենից առաջ, ավելի վաղ աճելու շնորհիվ, արևածաղկիը գարնանը լավ է օգտագործում հողում կուտակված խոնավությունը:

Ցածր չերմաստիճանի պայմաններում անցնելով զարգացման առաջն ֆազան, պայմանավորվում է նրա արմատացին սիստեմի լավագույն և ավելի ուժգին զարգացումը:

«Դոնդուրմա» ցանքը մի քանի օր շուտ է հասունանում և դա հնարավորություն է տալիս բերքահավաքը և կալսումը կատարելու լավագույն, չոր եղանակների պայմաններում:

Արևածաղկի բերքահավաքն ավելի վաղ ժամկետում կատարելը միաժամանակ հնարավորություն է տալիս շուտ կատարելու աշնանացանը և դրանով իսկ ապահովելու աշնանացանի բարձրությունը:

Ցանքային աշխատանքների մի մասը փոխադրելով աշումը՝ հնարավորություն է ստեղծվում գարնան աշխատանքները կատա-

րել ավելի կարճ ժամկետում, որպիսի հանգամանքը շորային շըր-
ջանների համար վճռական դեր է խաղում բարձր բերքի համար
մղվող պայքարում: Արևածաղկի «դոնդուրմա» ցանքը բարձրացնում
է բերքատվությունը գարնանային ցանքերի համեմատությամբ և
միաժամանակ բարելավում է սերմերի ու յուղի որակը, ինչպիս-
նակ ավելացնում է յուղի քանակը:

Վերջապես «դոնդուրմա» ցանքերը քիչ են վնասվում ճրագա-
խութիւ:

Ահա, «դոնդուրմա» ցանքի ոչ բոլոր, սակայն ամենից արժե-
քավոր առավելությունները գարնան ցանքի համեմատությամբ:

Յանքի «դոնդուրմա» եղանակից ստացվող դրական ար-
դյունքների հետ միասին, երբեմն այդ եղանակով կատարած ցան-
քերը տալիս են բացասական արդյունքներ: Այդպիսի ցանքերը
տալիս են նուրացած ծիլեր, իսկ երբեմն բոլորովին փշանում են:

«Դոնդուրմա» ցանքերը փշանում են մի քանի պատճառով: Օ-
րինակ.

1. Երբ սերմերը ծլում և ոչնչանում են սառնամանիքներից:

2. Երբ սերմերը աշնանից ուշում են և ոչնչանում՝ ցածր և
տատանվող զերմաստիճանի աղղեցության տակ:

3. Երբ գարնան կրկնվող ցածր զերմաստիճանը ներգործում
է ծիլերի վրա:

Զնայած «դոնդուրմա» ցանքի հայտնի պրակտիկ նշանակու-
թյանը, այդ ձևի թեորետիկ հիմունքները, որոնք հնարավորություն
են տալիս ուսցիոնալիզացնել նրան, առայժմ թույլ են մշակված և
հատկապես ներ տեղը հանդիսանում է սերմերի ծլման փիզիոլո-
գիայի ուսումնասիրությունը:

«Դոնդուրմա» ցանքի ազրոտեխնիկական ուսցիոնալ ձեւերի
մշակության հաջողությունը ապահովող կարեռագույն նախա-
դրյալը հանդիսանում է ցանքի ոչնչացման պատճառների ճշտիվ
սահմանումը:

Նրանցից մի քանիսը մենք ցույց ենք տվել վերևում:

ՑԱՆՔԻ ԵՂԱՆԱԿԸ (ՉԵՎԸ)

Արևածաղկի շարքահերկ կուտուրա է, ուստի նրա ցանքը պետք
է կատարել լայն շարքերով, այն հաշվով, որ բուսաճման (վեգե-

տացիա) ժամանակամիջոցում ապահովվի ցանքի խնամքը, միջշարքային տարածությունների և շարքերի միջև հողի փիսրեցնելն ու մոլախոտերի ոչնչացնելը:

Ցանքի առաջարեղում հիմնականն այն է, որ համապատասխան յայնություն վերցվի միջշարքային տարածություններում, որը առաջին հերթին որոշվում է յուրաքանչյուր հողակլիմայական գոտու համար սահմանված բույսերի սննման օպտիմալ տարածությամբ:

Սրտադրության մեջ արևածաղկի խնամքի խաչաձև եղանակի ներդրման կապակցությամբ, սերմերի ցանքի նորման բացառիկ նշանակություն ունի: Փորձով ապացուցված է, որ խնամքի խաչաձև եղանակը հնարավոր է այն ժամանակ, երբ վունչը 20 ամ լինելու դեպքում մեկ գծամետրում լինում է ոչ պակաս 20 բույս:

Սակայն քանի որ սերմերի դաշտային ծլունակությունը միշտ էլլ լաբորատոր ծլունակությունից ցածր է լինում մոտավորապես 10—20%, ապա ամեն մի գծամետրում 20 բույս ունենալու համար, հարկավոր է ցանել մինիմումը 25 սերմ:

Հեկտարում գծամետրերի թիվը կախված է միջշարքային լայնությունից, որը հողակլիմայական որոշ գոտու համար կախված է ընդունված բույսերի սննման մակերեսից: Հետևապես, ցանքի նորման սարաբաժանվում է ըստ հողակլիմայական գոտիների, նայած ընդունված միջշարքային լայնությանը՝ որքան լայն է միջշարքային տարածությունը, այնքան ցածր է ցանքի նորման և ընդհակառակը:

Յուրաքանչյուր գոտու սահմաններում միջշարքային միևնույն տարածության դեպքում, ցանքի նորման որոշվում է նոսրացման եղանակով, սերմերի բացարձակ կշիռով և սերմի տնտեսական պիտանիությամբ: Ներկայումս արևածաղկի ծիւերի նոսրացման երկու եղանակ գոյություն ունի՝ ձեռքով և մեքենայով, ըստ որում, մեքենայով նոսրացնելու եղանակը, որը ապահովում է արևածաղկի հատակա խաչաձև խնամքը, պահանջում է ցանքի ավելի բարձր նորմա, քան ձեռքով նոսրացնելու դեպքում:

Օրինակ, ձեռքով նոսրացնելու դեպքում մեկ գծամետրի վրա բավական է ունենալ 15—16 սերմ: Մերենայական նոսրացման համար ցանքի նորմայի բարձր լինելը բացարձում է նրանով, որ արևածաղկի հացարդատիկային շարքացանով ցանքի ավելի բարձր նորմա, քան ձեռքով նոսրացնելու դեպքում:

սերմը անհամաշափի ցրելու հետևանքով ստացվում են տարբեր չափի թերացանքի տեղեր, որոնց թիվը կախված է ցանքի նորմացից: Սահմանված է, որ որքան շատ են թերացանք տեղերը (պօքեա), որոնց չափը գերազանցում է փնջի լայնությանը, այնքան շատ են լինում դատարկ և մեկ բույս ունեցող բները՝ առաջին խորության առաջարկի կուլտիվացիայի մամենակին:

Դատարկ բները իշեցնում են մեկ հեկտարում բույսերի խտությունը: Այդ պատճառով, որպես կանոն, խաչաձև կուլտիվացիայի դեպքում ցանքի նորման պետք է բարձր լինի ձեռքավ նորմացնելու համար ընդունված նորմայի համեմատությամբ:

Արևածաղկի սնման օպտիմալ մակերեսը որոշվում է գլխավորապես վեղետացիայի ընթացքում եղած տեղումների քանակով, հողում եղած խոնավության պաշարով և հողի բերրիությամբ: Որքան չորացին է շրջանը և աղբատիկ է հողը իր բերրիությամբ, այնքան պետք է ավելի լինի սնման մակերեսը և ընդհակառակը, խոնավ գոտում և բերրի հողում սնման մակերեսը պետք է պահանջին:

Յուրաքանչյուր հողակլիմայական գոտի ունի իր՝ արևածաղկի օպտիմում սնման մակերեսը, որը ամենից շատ է բերքավայրում:

Սերմերի բերքից բացի, ոչ պակաս կարևորություն ունեցող հարցը հանդիսանում է այն, թե ինչպիսի կախում գոյություն ունի սնման մակերեսի և սերմերի յուրայնության միջև:

Այդ հարցի առիթով հետազոտությունները ցույց են տալիս, որ սնման մակերեսը սահմանված օպտիմումից $10\%/\phi$ շեղվելու դեպքում, սերմերի մեջ յուղի պարունակությունը համարյա մնում է անփոփոխ, իսկ տարածության միավորում բույսերի չափազանց նոսր լինելը, իշեցնում է ոչ միայն սերմերի բերքը, այլ և նրանց յուղի պարունակությունը:

Պետական հանձնաժողովի Ստեփանավանի շրջանի Վարդարուր գյուղի և Նոյեմբերյանի շրջանի Ղալաշ գյուղի փորձահողամասերի մի շարք տարիների տվյալներով պարզվել է, որ արևածաղկի սնման լավագույն մակերեսը Ստեփանավանում համարվում է $0,18-1.9-0,24$ քառ. մետր, իսկ Նոյեմբերյանում՝ $0,20-0,24$ քառ. մետր:

Արևածաղկի խորամքի գործում մեքենաները լիովին օգտագոր-

ծելու համար, ցանքը պետք է կատարել միայն շարքացաններով, լայն վեցնելով միջարքային տարածությունները, այն հաշվով, որպեսզի ապահովի կուլտիվացիան Ռմիկերալ տրակտորով (70 սմ). կամ ձիու կուլտիվատորով (60 սմ):

Յանքի ժամանակ առանձնապես պետք է պահպանվի.

ա) շարքերի ուղղագծությունը,

բ) սահմանված միջարքային լայնությունը:

Արևածաղկի սերմերը պետք է ծածկվեն 6—8 սմ խորությամբ և անպայման հողի խոնավ շերտում:

ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

Արևածաղկի մշակման դործում բոլոր ագրոմիջոցառումների սիստեմում հիմնականը և վճռականը՝ խնամքն է: Խնամքի ասպարեզում ամենապատասխանատու մոմենտը՝ սերմերի ծելու ժամանակաշրջանում հողի փիրեցումն է և մոլախոտերի առաջինքաղանը:

Արևածաղկի առաջին փիրեցումը և քաղցանը կարող է կատարվել մեքենայով, կամ ձեռքով:

Արևածաղկի ագրոտեխնիկան բարեկավելու, հետևապես, բերքատվությունը բարձրացնելու նպատակով, յուղատու կամլուրաների Համամիութենական Գիտահետազոտական Ինստիտուտի կողմից մշակվել և արտադրության մեջ լայնորեն ստուգվել է՝ արևածաղկի մեխանիզացված խաչաձև կուլտիվացիայի ագրոտեխնիկան:

Այդ միջոցառումը հեշտացնում է կոլխոզների ձեռքի աշխատանքը, ապահովում է բարձրորակ ու ժամանակին խնամքը, միաժամանակ հանդիսանում է էֆեկտիվ միջոցառում՝ հողում խոնավություն պահպանելու և գաշտերը մոլախոտերից մաքրելու համար:

Արևածաղկի ծիլերը սովորաբար դուրս են գալիս ցանքից 9—12 օր հետո: Ծիլերի քանակը միշտ էլ մի քանի անգամ ավելի է լինում այն նորմայից, որը յուրաքանչյուր հողակլիմացական գոտում ապահովում է հատիկի բերքը. հետևապես, եթե շարքերից ժամանակին չենացվեն ավելորդ բույսերը, ապա բարձր բերք չի ստացվի:

Ավելորդ բույսերի հեռացնելը, կամ նոսրացումը պետք է կոտարել այն մոմենտին, եթե բացվում են առաջին զույգ տերեկիները, ավարտելով այդ աշխատանքը 3—4 օրվա ընթացքում:

Արևածաղկի ցանքերի փիրեցումը պետք է կատարել սովորական կուլտիվատորներով, ըստ որում ԱՏՁ և ԽՏՁ արակտորներին կցվում են երկու կուլտիվատոր, ինչ Յ-1 և Յ-2 արակտորներին՝ մեկ կուլտիվատոր:

Լայնակի (ըստ լայնքի) առաջին փիրեցումը պետք է կատարել 5—8 ամ խորությամբ:

Միջարքային արածությունների ըստ լայնքի առաջին կուլտիվացիայից հետո, կամ նրա հետ միաժամանակ պետք է կատարել նաև առաջին երկայնակի (երկարությամբ) կուլտիվացիան:

Միջարքային արածությունների առաջին լայնակի և երկայնակի կուլտիվացիայից հետ միաժամանակ կատարվում է նոսրացում և փնչերի կամ բների քաղցան:

Ամեն մի փնջում, կամ բնում պետք է թողնել մեկից երկու ամենից ավելի ուժեղ զարգացած բույս, պահպանելով բնում հղած բույսերի միջև 5—7 ամ արածություն, որի հետևանքով մեկ հեկտարում մնացած բույսերի քանակը պետք է լինի.

ա) Հյուսիսային խոնավ շրջաններում 48 հազար հատ.

բ) շորային և կիսաշորային շրջաններում 40—42 հազար հատ:

Ցուղարու կուլտուրաների շամամիութենական գիտահետազոտական ինստիտուտի տվյալներով պարզված է, որ շարքերի մեջ բույսերի բնիրում դասավորման աստիճանը բոլորովին աղղոցություն չի թողնում ոչ միայն սերմերի որակի, այլ և բերքի վրա, ուստի փնջերի նոսրացման ժամանակ անհրաժեշտ է բույսերը թողնել փնջի կամ բնի կենտրոնում և ոչ թե միմյանցից հեռու, քանի որ լայնակի կուլտիվացիայի դեպքում, բույսերը կարող են կորավել կամ վնասվել:

Լայնակի առաջին կուլտիվացիայից 10—12 օր հետո անհրաժեշտ է կատարել լայնակի երկրորդ կուլտիվացիան, որի խորությունը չպետք է գերազանցի 8, մաքսիմում 10 ամ-ից:

Լայնակի երկրորդ կուլտիվացիայից անմիջապես հետո, կատարվում է երկայնակի երկրորդ միջարքային՝ կուլտիվացիան, միաժամանակ ձեռքով քաղցանվում են բները, կամ փնջերը:

Երկայնակի երկրորդ կուլտիվացիայից՝ 10—12 օր հետո, նաշատ մոլախոտերի երևալու և հողի ամբացման աստիճանին, կատարվում է երկայնակի երրորդ կուլտիվացիան, ոչ ավելի 8—10 սանտիմետր խորությամբ:

Վերջին կուլտիվացիայից հետո, անհրաժեշտության դեպքում, պետք է 1—2 անգամ ձեռքով քաղցանվի:

Այսպիսով, բուածման (վեգետացիա) ժամանակաշրջանում արևածաղկի դաշտում պետք է կատարվի ոչ պակաս երկու լայնակի և երեք երկայնակի կուլտիվացիա, միաժամանակ վնչերի կամ բնիրի քաղցան: Վերջին կուլտիվացիայից հետո պետք է ձեռքով քաղցանվի 1—2 անգամ:

Արևածաղկիը գլխավորապես խաշածե փոշոտվող բույս է և այդ պատճառով նրա սերմերի բերքը մեծ չափով կախված է այն բանից, թե ինչպես է ընթանում փոշոտման պրոցեսը: Արևածաղկի փոշոտումը կատարվում է միջատների և քամու միջոցով, փոշեցատիկները մեկ բույսից մյուսի վրա տարածելու ճանապարհով: Ինչպես հայտնի է, արևածաղկիը մեղրատու բույս է, որի վրա շատ սիրով հավաքվում են ամեն տեսակի միջատներ, այդ թվում նաև մեղուներ:

Ուկրաինական մեղվաբուծական ինստիտուտի և միության այլ փորձնական հիմնարկների հետազոտություններով ապացուցված է, որ մեղուներն արևածաղկի փոշոտման գործում մեծ դեր են խաղում, բարձրացնելով նրա սերմերի մեկ հեկտարի բերքը 2—3 տեսակներով:

Դատարկ հատիկների տոկոսն իշեցնելու, հետեւապես ավելի բարձր բերք ստանալու համար, բույսի ծաղկման ժամանակ անհրաժեշտ է մեղվի վեթակները մոտեցնել արևածաղկի դաշտերին: Փետակներն այդ դաշտերից պետք է լինեն 100—150 մետր հեռավորության վրա, յուրաքանչյուր հեկտարի վրա տեղավորելով 1—3 մեղվաբնակներ:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՍՆՈՒՑՈՒՄԸ

Զնայած արևածաղկի սնուցումը նոր ագրոմիջոցառում է, սակայն արդին լայնորեն կիրառվում է և լիովին արգարացրել է այդ դուրսում ներդրված միջոցները և աշխատանքային ծախքերը:

Եթե մինչև արևածաղկի ցանքը հողը չի պարարտացվել, ապա սնուցումը պետք է տալ նորացման ժամանակ՝ յուրաքանչյուր հեկտարին 150 կիլոգրամ սուլֆատ-ամոնիում, 200 կլգ սուազեր-ֆոսֆատ, 100 կլգ կալիումի աղ:

Սնուցման արդպիսի ժամկետները ընդունվել են հետևող նկատառումներով, երիտասարդ հասակում արևածաղկի համար հողամանական պարարտացման հաշվին բավականաշատ սննդանցումներով կան, ուստի սնուցում պետք է տալ այն ժամանակ, երբ արևածաղկի ձևավորվում է (պլիխիկներ) և հատկապես օդուագործում է աղոտ, ֆոսֆոր և կալի: Եթե հիմնական պարարտացումը բացակայում է, անհրաժեշտ է սննդանցումները տալ սկզբում, որպեսզի երիտասարդ բույսերը իրենց կյանքի առաջին շրջանում հնարավորություն ունենան մաքսիմալ շափով զարգանալ և ամրանալ: Հողամասը նախապես պարարտացված լինելու դեպքում կարելի է սնուցել արևածաղկի գլուխները կազմվելուց առաջ, հեկտարին տալով 100 կիլոգրամ սուլֆատ-ամոնիում, 150 կլգ սուլֆերֆոսֆատ և 75 կլգ կալիումի աղ: Տեղական պարարտանցությունը սնուցման նպատակով կարելի է գործադրել գոմազրածյութ (2 տոննա մեկ հեկտարին) թոշնազը (2 ցենտներ), կամ մոխիք (5 ցենտներ):

Վաղ սնուցման դեպքում պարարտանցությը պետք է մտցնել 10 սմ խորությամբ, շարքի երկու կողմերին 10—15 սմ տարածության վրա, իսկ ուշ սնուցման դեպքում՝ 13—14 սմ խորությամբ՝ շարքերի միջև:

Պարարտանցությունը մտցնելու նշանակած դոզան և նրանց դուրսկցումը հնարավոր է ճշտել ստահանովականների պրակտիկայի և փորձի հիման վրա, ենելով յուրաքանչյուր հողամասի հողակլիմայական պայմաններից և մշակման աստիճանից:

Չոր պարարտանցությունը հարկավոր է մտցնել ակոսների մեջ կոմբինացված շարքացանով, իսկ ճեղքով ցրելու դեպքում հողուրագներով պետք է ծածկել այն:

ՊԱՅՔԱՐԾ ՎՆԱՍԱՇՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Արևածաղկի ցանքերին մեծ վնաս են պատճառում վնասատուները և հիվանդությունները: Արևածաղկի հատուկ վնասատուներից են՝ արևածաղկի բեխիկալորը (յօսայ) և ցեցը:

Առաջին վնասատում վնասում է արեածաղկի ցողունը: Սա մեծ չափով թուլացնում է բույսը, և զրահետևանքով ստացվում են լրիվ շպարգացած դլուխներ և սերմեր:

Արեածաղկի բնիսիկալորի դեմ պայքարելու հիմնական միջոցառումը նախազգուշականն է, այն է՝ վաղ ցանքը, արեածաղկի արձատների հավաքելը, այրելը, խոկաշնանը, բերքահավաքից հետո, խոր ցրատավար կատարելը և մոլախոտերի դեմ տարվող պայքարը:

Արեածաղկի ցեցը վնասում է սերմերին: Մրա դեմ պայքարելու միջոցառումը՝ ցանքը սորտային սերմերով կատարելն է:

Վնասատուի թրթունները ամուր վահանացին շերտ ունեցող սորտերի սերմերը չեն կարողանում կրծել և մեջը թափանցել:

Արեածաղկին ամենից ավելի վնաս պատճառող հիվանդություններ են՝ սկսերցինան, ժանգը և դիսիկների չոր փոտախտը:

ա) Սկլերոցինան.— Պլսավորապես վնասում է արեածաղկի ցողունի հիմքերին, նու կարող է վնասել նաև արեածաղկի գլուխիկը:

Դրա դեմ պայքարելու համար հիվանդությունները պետք է հեռացվեն և այրվեն:

բ) Ժանգը.— Արեածաղկի պլսիկներ կազմելու մոմենտին ժանգը վնասում է ներքեփ տերեններին, որը թուլացնում է ասիմիլացիան և կատեցնում բույսերի զարգացումը:

Պայքարի հիմնական միջոցառումը՝ վարակված դաշտերից արեածաղկի ցողունների մնացորդների հավաքելն ու այրելն է:

գ) Գլսիկների չոր փոտախտը՝ վնասում է միայն արեածաղկի պլսիկներին: Հիվանդության պրոցեսում պլսիկները վտիտանում են, հյուսվածքը քայքայվում է և սերմերը բջիջներից (փոսիկներից) թափվում են:

Պայքարի հիմնական միջոցառումը՝ վնասված պլսիկների դաշտից հեռացնելն ու այրելն է:

Արեածաղկի արմատների վրա ազդում է նրա ամենամեծ չարիքը՝ ճրագախոտը (զարագիխան): Ճրագախոտի դեմ պայքարի միջոցառումը՝ ծաղկակերների հավաքելն ու ոչնչացնելն է, ինչպես նաև ճրագախոտաղիմացիկուն սորտեր ցանելը: Բացի այդ, ճրագախոտով վարակված հողերում 4—5 տարի շպետք է ցանվի արեածաղկի և ծխախոտ:



ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԵՎ ԿԱԼՍՈՒՄԸ

Արևածաղկի բերքահավաքը կատարվում է կոմբայնով և ձեռքով:

Կոմբայնով բերքահավաքն անհրաժեշտ է սկսել արևածաղկի պլիսիկների 5 տոկոսից ոչ պակասը գորշ գույն ստանալու մոմենտին իսկ ձեռքով հավաքել, եթե արևածաղկի պլիսիկները հատունանում են:

Արևածաղկի ձեռքով հավաքելու ժամանակ, կոթունները պետք է կտրաել ոչ ավել, արևածաղկի պլիսիկից մեկ մետր երկարությամբ և չորանալու համար դասավորել շարքով այնպես, որ հաջորդ շարքի պլիսիկները դասավորվեն նախորդ շարքի կոթունների վրա:

Նեխելուց և վնասատուներից խուսափելու նպատակով, արևածաղկի պետք է կալսել ամենաուշը 10 օրվա ընթացքում:

Արևածաղկի սերմերն անհրաժեշտ է պահպանել շոր շենքում և լավ չորացված վիճակում (ոչ ավելի 12—13 տոկոս խոնավությամբ):

ԱՐԵՎԱՇՍՂԿԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՍՈՐՏԵՐԸ ԵՎ, ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՍ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սորտերի փորձարկման պետական հանձնաժողովի Ստեփանավանի շրջանի Վարդարլուր գյուղի և Նոյեմբերյանի շրջանի Դալաշա գյուղի սորտափորձահողամասերում 1941—1945 թվերին կատարած սորտափորձարկման արդյունքների հիման վրա, սպասարկման գոտիների համար, որպես արևածաղկի հեռանկարային սորտեր ճանաչվել են յուղատու արևածաղկի «Կրուգլիկ Ա.—41» և «Անիիմկ 4036» սելեկցիոն սորտերը:

1. «Կրուգլիկ Ա. 41» սելեկցիոն սորտը 4 տարի փորձարկվել է Ստեփանավանի և 6 տարի Նոյեմբերյանի փորձահողամասերում: Փորձարկման տարիներում այդ սորտի միջին բերքը հեկտարից կազմել է 13.6 ցհնտներ (Ստեփանավան) և 15.8 ցհնտներ (Նոյեմբերյան): Գլխիկի տրամագիծը եղել է 12—13 սմ և ցողունի բարձրությունը՝ 164—165 սմ:

Սա միջակ վաղահաս սորտ է:

2. «Անիմիկ 4036» սելեկցիոն սորտի փորձարկումը կատարվել է 4 տարի Ստեփանավանի և 5 տարի Նոյեմբերյանի փորձահոգամասերում:

Փորձնական տարիներում սորտի միջին բերքատվությունը հեկտարից կազմել է 13,4 ցենտներ (Ստեփանավան) և 17,4 ցենտներ (Նոյեմբերյան): Գլխիկի տրամադրությունը եղել է 10—11 սմ իսկ ցողունի բարձրությունը՝ 158—160 սմ:

Սա վաղաճաս սորտ է:

Քանի որ «Անիմիկ 4036» սորտը 7—8 օրով վակ է հասնում, քանի «Կրուպիկ Ա.—41» սորտը, ուստի որպես աշնանացանին նախորդող կուլտուրա, Ստեփանավանի, Կալինինոյի, Ալավերդու և Կիրովականի լեռնատափաստանային գոտու, ինչպես նաև Նոյեմբերյանի, Շամշադինի, Իջևանի ու Ալավերդու շրջանի լեռնատառատափաստանային գոտու համար առաջնությունը պետք է տալ «Անիմիկ—4036» սորտին, որը սորտերի փորձարկման պետական հանձնաժողովի կողմից շրջանացված է . վերոհիշյալ գորակների համար, իբրև հիմնական սորտ, իսկ «Կրուպիկ Ա.—41»-ը որպես թույլատրելի սորտ, չնայած վերջինս իր բերքատվությամբ մասամբ բարձր է առաջինից:

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արևածաղկի սերմացուն տարիների ընթացքում արտադրության մեջ կկորցնի իր սկզբնական տնտեսական արժեքավոր հատկությունները, իթե կոլխոզային դաշտերում չկազմակերպվեն այդ սերմի բարելավման աշխատանքները: Այդ նպատակով յուրաքանչյուր կոլխոզում պետք է կազմակերպվեն սերմադաշտեր: Սերմադաշտերը կազմակերպվում են բարձրորակ և արժեքավոր սերմացու ստանալու համար, որը հանդիսանում է բարձր բերքի երաշխիքը:

Այդ նպատակին հասնելու համար, սերմնադաշտերի վրա կիրառվում է բարձր ագրոտեխնիկա՝ է'լ ավելի ճիշտ կազմակերպվում աշխատանքը՝ ցանքի, խնամքի, կալսման, սերմի զտման և պահպանման ու սորտային քաղաքանի, ինչպես նաև ամենաարժեքավոր տեսակների մասսայական ընտրության գործում: Սերմադաշտերի համար նախապես ընտրվում են լավագույն, բերքատու

Հողեր ցանքաշրջանառության դաշտերում, այնպիսի հողեր, որոնք հատկացվում են շարքահերկ կուլտուրաներին:

Սերմադաշտի հողամասը անպայմանորեն պետք է մեկուսացվի այլ սորտերով զբաղված հողամասերից, ՍՍԸՄ դյուզատընտեսության Մինիստրության կողմից մշակված հրահանգի՝ համաձայն:

Ինչպես ցանքի, այնպես էլ բերքահավաքի ժամանակ, անհրաժեշտ է խստիվ հետեւ, որպեսզի տնտեսական ցանքի դաշտերից մեքինաներն առանց մաքրվելու շմտնեն սերմադաշտերը, այլպես սորտը կարող է ազբուտվել: Բուսաձման (վեգետացիալի) ժամանակաշրջանում սերմադաշտում պետք է երեք տնգամ սորտային քաղցան կատարի՝ ծաղկումից առաջ, ծաղկումից հետո և բերքահավաքից առաջ, որի ընթացքում պետք է հեռացվեն տվյալ սորտի համար ոչ տիպիկ և ճրագախոտով վարակված, հյուզավորված, թույլ զարգացած ու ուշ ծաղկող բոլոր բույսերը:

Սրևածաղկի ծաղկելուց առաջ, սերմադաշտի շրջագայքում աճած բոլոր բույսերը պետք է հեռացնեն:

Սերմադաշտերից հավաքած սորտային սերմերը պետք է խընտամքով չորացնել, տեսակավորել և մաքրել, հասցնելով սահմանված կանոնիցիալին ու պահպանել լավ օդափոխված ու չոր շենքերում:

Սերմադաշտերից հավաքած սերմացուն պետք է պահպանվի տնտեսական ցանքերի բերքից առանձին, պարկերի մեջ:

Սերմերով լիքը բոլոր պարկերը պետք է կարովեն և պիտակավորվեն (էտիկետավորվեն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Արևածաղկի ժողովրդատնտեսական նշանակությունը	3
Արևածաղկի բուաբանական համառոտ բնութագիրը և նրա կենսաբանական առանձնահատկությունները	3
Արևածաղկի տեղ ցանքաշրջանառության մեջ	4
Հողի հիմնական մշակությունը	5
Պարարտացումը	5
Հողի նախացանքային մշակությունը	6
Սերմի նախապատրաստումը, ցանքի ժամկետներն ու նոր- մաները	7
Ցանքի եղանակը (ձեռ)	10
Ցանքի խնամքը	13
Արևածաղկի սնուցումը	15
Պայքարը վնասատուների և հիվանդությունների դեմ	16
Բերքահավաքը և կալսումը	18
Արևածաղկի հեռանկարային սորտերը և նրանց համառոտ բնութագիրը	18
Արևածաղկի սերմարուծությունը	19




Պատ. խմբագիր՝ Վ. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ս. ԽՍՀԱՏՐՅԱՆ

Վ.թ 04335 Պատվեր 375. Տիրած 2000. Տպագր. 1,25 հետ. 0,7 մամ.
Հանձնված է տպագրության 13/VIII 1947 թ., Ստորագրված է
տպագրության 31/XII—47 թ.

Հայոց եռերամի տպարան, Երևան, Լենինի փ. № 65,





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008379

39

ԳԻՒԾ 50 Կ.

ԳԻՒԾ -

11
018579